



«17» 08 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 75

Ձեռնարկողը՝

<<Ախուրյանի Կոոպչին>> ՍՊԸ

Ք. Գյումրի, Գ. Նժդեհի 9/4 4

Գործունեությունը՝

**Կառնուարի անդեզիտաբազալիտների երևակման
Կառնուար 1 տեղամասում ընդերքի երկրաբանական
ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

<<Շիրակի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝**



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 75

<17> 08 2017թ.

«Շիրակի մարզի Կառնուրի անդեզիտաբազալտների երևակման Կառնուր 1 տեղամասում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»

Ձեռնարկող՝	<<Ախուրյանի Կոոպչին>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	«Շիրակի մարզ, Կառնուտ համայնք»



«Ախուրյանի Կոոպչին» ՍՊԸ ընկերության կողմից նախատեսվում է «Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտաբազալտների երևակման Կառնուտ 1 տեղամասի սահմաններում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով իրականացնել ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն: Ծրագրի մշակման նպատակն է 2017-2018 թթ. ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից գործունեության համար նախատեսվող մոտ 4.0 հա գյուղատնտեսական նպատակներով անօգտագործելի տարածքի վրա իրականացնել համալիր երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ նպատակ ունենալով պարզաբանելու հանքային մարմնի պարամետրերը, որակական հատկանիշները որպես շինարարական քար, ինչպես նաև շինարարական խճճ և կոպիճ՝ շինարարական խճի և ավազի արտադրության համար հումքային հենք ստեղծելու համար: Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերով, մերկացումներով, փորձնական բացահանքով և նմուշարկման աշխատանքներով: Լեռնային զանգվածից կոնդիցիոն հումքի ելքը կորոշվի փորձնական բացահանքում, և կկատարվի արդյունահանված բլոկների սղոցում: Կորոշվի հումքի որակական հատկանիշները և կկատարվի պետրոգրաֆիական ուսումնասիրություններ: Հումքի որակական հատկանիշները կուսումնասիրվեն 'Անալիտիկ' ՓԲ ընկերության լաբորատորիայում:

'Կառնուտ-1' անդեզիտաբազալտների տեղամասը վարչական տեսակետից գտնվում է «Շիրակի մարզի Ախուրյանի ենթաշրջանում և տեղակայված է Կառնուտ գյուղից 0.98կմ դեպի արևելք 1635-1720 մ բացարձակ բարձրությունների վրա : Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- 40° 46 ' 55 " - հյուսիսային լայնության
- 43°58 ' 07 " - արևելյան երկայնության

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի անդեզիտաբազալտները, որոնք աններդաշնակությամբ տեղադրված են ավելի հին հասակի ապարների ողողահարված մակերեսի վրա և ժամանակակից պրոյուվիալ-դեյուվիալ առաջացումները: Անդեզիտաբազալտները ծածկված են ժամանակակից դեյուվիալ-էյուվիալ փոխրթեկորային առաջացումներով և հողաբուսական շերտով, որոնց առավելագույն հզորությունը 0.8մ է:

*Ապրիլի 17-ին արևելք
Ս. Սարգսյան
4.08.17թ*

Տեղամասի 1 :1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 4հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ: Նախատեսվում է բոլոր փորվածքների մարկշեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում: Հետախուզվող տեղամասում հանքային գոտին խորքում հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել 6 հորատանցք 25-50մ խորությամբ:

Երևակման անդեզիտաբազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունների և քիմիական կազմի որոշման ինչպես նաև պետրոգրաֆիական հետազոտությունների համար նախատեսվում է կատարել նմուշարկման աշխատանքներ: Նմուշարկման ընդհանուր ծավալը կկազմի 59 նմուշ :

Հետախուզվող տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների և գեոդինամիկ երևյալների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Նախագծված տարածքի երևակման տեղամասում հետախուզման և գնահատման նպատակով իրականացվող աշխատանքները ներառում են.

6 հորատման հրապարակների և դրանց մոտեցման ճանապարհների նորոգում^ա 4-րդ կարգի ապարներում: Այդ աշխատանքների ծավալները ներառում են՝ հորատման հրապարակների կառուցում և ճանապարհների նորոգում :

- Նախատեսվող 6 հորատման հրապարակի, մակերեսը գումարային կազմում է 270մ² /որտեղ հողաբուսական շերտի 0.3մ հզորության պայմաններում աշխատանքների ծավալը կկազմի 81 մ³:/

-Նորոգվող 1.5 կմ ճանապարհի հողային աշխատանքների ծավալը ընդհանուր կկազմի 675մ³ / ճանապարհի 1.5մ լայնության և 0.3մ խորության պայմաններում/:

Հորատման աշխատանքներն իրականացվելու են 93 և 76մ տրամագծով ավաստեթափկներով հորատող հաստոցով: Հորատման ընտրված եղանակով հանքային գոտիներից և մարմիններից պետք է ապահովի 90%-ից ոչ պակաս հորատահանուկի ելք:

Նախնական գնահատման հայտում ներկայացվել է ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա /հող, ջուր մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն/ հնարավոր ազդեցությունները, որոշվել է վերջիններիս վնասակարության աստիճանը և մշակվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որոնք ուղղված են նախատեսվող աշխատանքների ժամանակ հնարավոր ծխազագերի և անօրգանական փոշու արտանետումների նվազեցմանը, վառելիքի և նավթամթերքների հնարավոր արտահոսքերի կանխմանը, հողային ռեսուրսները և շրջակա տարածքները աղտոտումից գերծ պահելուն:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվել են միջոցառումներ: Հորատահարթակների կառուցման ժամանակ հողի բերրի շերտը հանվում և պահեստավորվում է այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ հետագայում հետախուզական աշխատանքների ավարտից հետո հետախուզահորերի և հորատման հարթակների խախտված տարածքներում վերականգնման նպատակով օգտագործելու համար: Պահպանության ենթակա բուսաշերտի ծավալը, որը 0.3մ հզորությամբ, վերականգնման ենթակա՝ 240մ² ընդհանուր մակերեսում գնահատվել է 42մ³: Ռեկուլտիվացիայի իրականացման համար նախատեսվող ծախսերը այդ մակերեսի վերականգնման համար գնահատվել են 216 000 դրամ: Հողօգտագործման համար համայնքին վնասի փոխհատուցման գումարը գնահատվել է 84 000 դրամ: Հողաբուսաձածկի շերտով տարածքների վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում: Տարածքների վերականգնման աշխատանքները

ներառում են նաև տվյալ տարածքին բնորոշ բուսատեսակներով ցանքս, կամ ճմապատում, ինչի իրականացման պարագայում բարձրացնում է հողի հակաէրոզիոն հատկությունները:

Նախագծային փաթեթում նախատեսվող աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողեր, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր և այլն/ նկատմամբ ներկայացվել է բնապահպանական մշտադիտարկումների պլան, որի իրականացման համար նախատեսվող ծախսերը, որն ընդհանուր գնահատվել է 200.0 հազ.դրամ: Ծրագրով երկրաբանական ու մնասիրության աշխատանքների իրականացման ժամանակացույցը նախատեսվել է 2 տարի: Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում 08.08.2017թ ՀՀ Շիրակի մարզի Կառնուտ համայնքում անցկացվել է հանրային քննարկումներ: Քննարկումների ժամանակ ծրագրի իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության այն նկատառումներով, որ հետագայում հանքավայրի շահագործումը որոշակիորեն կարող է նպաստել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ, իսկ ընկերությունը նախատեսում է աջակցել համայնքի որոշ սոցիալ-տնտեսական ծրագրերի ֆինանսավորման գործընթացին:

Հայտում ներկայացված բնապահպանական ազդեցությունների մեղմացման միջոցառումների ապահովման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախնական գնահատման հայտում առաջարկված՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա /ջուր, մթնոլորտային օդ, հող, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր/ բացասական ազդեցությունները կանխարգելող և մեղմացնող միջոցառումների և մշտադիտարկման գործողությունների իրականացումը և ժամանակացույցը:
2. Աշխատանքների իրականացման համար ջրօգտագործումը և շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<Ախուրյանի Կոռաչին>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի անդեգիտաբազալտների երևակման Կառնուտ 1 տեղամասում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Գլխավոր մասնագետ՝



Հ. Մկրտչյան